«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա ՝ *Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում*

Հաստատություն ՝ *«Աշտարակ համայնքի Աղձքի թիվ 14 Զանգակ մսուր մանկապարտեզ» ՀՈԱԿ*

Դաստիարակ ՝ *Գոհար Վարդանյան*

Ղեկավար՝ *Ժաննա Ավետիսյան*

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1: Նախադպրոցականների էքսկուրսիան. 5
1:1 Թեմայի և տեղի ընտրությունը, անվտանգության նախապատրաստումը 7
1:2 Մանկավարժի և ծնողի ներգրավվածությունը 8
ԳԼՈՒԽ 2: ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ 9
2.1 Էքսկուրսիայի նշանակությունը ճանաչողական զարգացման հարցում 10
2.2 Ազդեցությունը երեխաների հոգեբանության և էմոցիաների վրա 10
2.3 Ծանոթացում շրջակա աշխարհին և մշակույթին 12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 15
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Եթե բացենք որևէ կրթական ծրագիր կամ մեթոդական գրքեր, կարևոր չէ, թե որ առարկայի և որ տարիքի համար, վերապատրաստման և կրթության ձևերի,մեթոդների շարքում, շատ դեպքերում, առաջին տեղում էքսկուրսիան է: էքսկուրսիան կարող է իրականացվել տարբեր ձևերով:

Պատմությունը չի պահպանել հիշողություններ այն մասին, թե երբ և ում կողմից է իրականացվել առաջին էքսկուրսիան ընդհանրապես, բայց մենք հաստատ գիտենք, որ որպես ուսումնական մեթոդ, էքսկուրսիաները սկսեցին ներմուծվել կրթական գործընթացում Արևմտյան Եվրոպայի և Ռուսաստանի ուսուցիչների կողմից 18 - րդ դարի վերջին-19-րդ դարի սկզբին: ուսուցման այս հետաքրքիր մեթոդի անվանումը գալիս է Լատինական "էքսկուրսիոն" բառից:

Պատշաճ կերպով կազմակերպված և իրականացված էքսկուրսիան ինքնին դաստիարակության այնպիսի կախարդական միջոց է, որի միջոցով դուք կարող եք շատ լավ դիտարկել և շտկել երեխաների վարքի խնդիրները, որոնք գուցե միշտ չէ, որ տեսանելի են սովորական գործունեության ընթացքում: էքսկուրսիան կարող է իրականացվել ինչպես ֆիզիկական, այնպես էլ մտավոր գործունեության միջոցով: Սա հիանալի պատրվակ է՝ օգտագործելու ներառված դիտարկման մեթոդը: Էքսկուրսիայի ընթացքում տեսանելի են ինչպես յուրաքանչյուր երեխայի, այնպես էլ երեխաների կոլեկտիվի առանձնահատկությունները:

Էքսկուրսիան, առաջին հերթին, տեղեկատվություն է: Այն երեխաներին սվորեցնում է, մշակութային վայրերում լինել լուռ, զուսպ, չաղմկել, բնության գրկում լինելիս չաղտոտել տարածքը, չկոտրել ծառերի ճյուղերը և այլն.. Այսպիսով երեխաները էքսկուրսիաների ընթացքում նաև կրթվում են, սովորում վարվեցողության կանոնները և ընդգրկվում են սոցիումի մեջ:

Նախադպրոցական տարիքը անձի ձևավորման կարևորագույն փուլերից մեկն է, ուստի շատ կարևոր է, թե այս շրջանում երեխային ինչ է պետք սովորեցնել, հաղորդել և առավել կարևոր է, թե ինչպես, ինչ մթոդներով ու ձևերով դա անել:

Նախադպրոցական տարիքի յուրաքանչյուր երեխա, հետաքրքրասեր և անհագ է իրեն շրջապատող աշխարհի նկատմամբ, և հետաքրքրությամբ կլանում է նոր գիտելիքները: Այս տարիքում ամեն բան հետաքրքրում է երեխային: Նա ակտիվորեն ընկալում է աշխարհը, հետևաբար երեխայի տարիքայն այս առանձնահատկությունը պետք է առավելագույնս ճիշտ գտագործվի ուսումնական հասատությունում իրականացվելիք

կրթադաստիարակչական գործունեության ընթացքում: Հենց այս ժամանաահատվածում կարևոր է երեխաների մեջ սերմանել սեր հայրենիքի, բնության նկատմամբ, հետաքրքրություն առաջացնել նրա մշակութային արժեքների նկատմամբ, զարգացնել պատկերացումներն անձի և հասարակության մասին: Այսպիսի կարևոր հարցերի ձևավորմանը մեծապես նպաստում են պարբերաբար կազմակերպվող էքսկուրսիաները և մշակութային այցերը: Ուսումնական և դաստիարակչական այս առանջնահատուկ ձևը հնարավորություն է տալիս բնական պայմաններում դիտարկել առարաները և երևույթները: Միաժամանակ երեխայի մոտ ակտիվացնում է մտավոր ակտիվությունն ու հուզական ոլորտը:

Էքսկուրսիաներն ու մշակութքային այցերը տեսարժան վայրերի, թանգարանների, գրադարանների, թատրոնների, արտադրական ձեռնարկությունների, պատմամշակութային կոթողների և բնության գիրկ այցելություններ են ուսումնադաստիարակչական նպատակներով:

Էքսկուրսիաների էությունը կայանում է ցուցադրման և բացատրման համակցության մեջ: Այն զննական մեթոդ է: Էքսուրսիաները և մշակութային այցերը գործունեության այն ձևերն են, որոնք երեխաներին իսկապես դուր են գալիս:

Էքսկուրսիայի ֆունկցիան ուսումնասիրվող օբյեկտը բնական վիճակում ընկալելն է: Դրանք իրենց ծրագրային օրակարգով տարբեր են, դա կապված է թե ինչպիսի կոլեկտիվ է գնում էքսկուրսիա և որ տարիքային խմբին են պատկանում: Էքսկուրսիաները զարգացնում , ձևավորում. ամրապնդում են մարդու ճանաչողական, ստեղծագործական կարողությունները: Նա կարողանում է ինքնուրույն գիտելիքներձեռք բերել և այդ գիտելիքները ճիշտ կիրառել: Էքսկուրսիան նպաստում է երեխայի հետազոտաստեղծագործական կարողությունների և ամրապնդում է նրա բազմաբնոլյթ տածողությունը, որոնք ի հայտ են գալիս ծննդյ պահից: Էքսկուրսիաներն իրենց կարևոր տեղն ունեն ուսուցման գորընթացը կազմակերպելու մեջ: Այն կիրառվում է տարրական նախակրթարանից: Յուրաքանչյուր տարիքային խմբում այն ձևավորվում է յուրովի, ելնելով տարիքային առանձնահատկություններից: Կարևորում են նրանց ճիշտ և տեղին կազմակերպումը: Նախակրթարանու երեխաների մոտ ամեն ինչը դժվարությամբ է ձևավորվում, նրանց մոտ <<կոլեկտիվ>> հասկացությունը դրսևորվեուց հետո, հաջորդ քայլը էքսկուրսիա գնալն է: Այս տարիքային խմբին նպատակահարմար է տանել տիկնիկային թատրոն, նախապես ծանթոացնելով ներկայացման գլծավոր թեմատիկային, էթիկայի կանոններին, առանձին դրսևորման գոծոններին

Այսպիսով նրանք կկաչողանան կողմնորոշվել տարածության մեջ, կզարգացնեն իրենց տեսողական դաշտի պատկերացումները շրջապատող իրերի և անձանց նկատմամբ։

ԳԼՈՒԽ 1: Նախադպրոցականների էքսկուրսիան.

Կարևորությունն ու կազմակերպումը

Էքսկուրսիաները նախադպրոցական կրթական ծրագրի անբաժանելի մաս են կազմում: Այն նպաստում է երեխաների ճանաչողական, սոցիալական և Էմոցիոնալ կարողությունների զարգացմանը:

ԻՆՉՈՂՎ Է ԷՔՍԿՈՒՐՍԻԱՆ ԿԱՐԵՎՈՐ.

- Էքսկուրսիան յուրահատուկ հնարավորություն է տալիս երեխաներին ճանաչել աշխարհը բնության հետ անմիջական շփման միջոցով
- Խմբի երեխաների հետ շփումը, կանոններին հետևելը և ընդհանուր զբաղմունքները երեխաներին սովորեցնում են համագործակցել միմյանց հետ:
- Էքսկուրսիաները ուշագրավություն են առաջացնում տարբեր իրերի և երևույթների հանդեպ ու խթանում են երեխայի հետաքրքրասիրությունը:

Էքսկուրսիայի կազմակերպումը.

- **Թեմայի ընտրություն**
  Էքսկուրսիային պատրաստվելիս կարևոր կետերից է թեմայի ընտրությունը։ Այն կատարելիս հատկապես հարկավոր է ուշադրություն դարձնել, որ թեման լինի երեխաների տարիքին համապատասխան, անցնի ակտիվ պայմաններում, լինի չձանձրացնող։ Կարևոր է, որ էքսկուրսիան տարբերվի սովորական օրերից։ Ստեղծել մթնոլորտ, որտեղ երեխաները կլինեն ազատ և անկաշկանդ, հանգիստ կարտահայտեն իրենց էմոցիաները։ օրինակ՝ կարելի է կազմաերպել էքսկուրսիա Գարնան թեմայով, այցելել մոտակա այգի և ցույց տալ երեխաներին բնության

զարթոնքը (ձնհալ, ձյան տակ թաքնված ձնծաղիկներ, և այլն…)։ Փոքրիկների հետ քննարկել, թե ինչ երևույթներ են տեղի ունենում գարնանը. ցերեկվա տևողության երկարելը, թռչունների վերադարձը, ծառերի ծաղկելը, բույսերի արթնանալը և այլն։

- **Տեղի ընտրություն**

  Տեղի ընրությունն իհարկե կախված է տեղի ընտրությունից։ Որքան էլ դաստիարակի ծանոթ լինի էքսկուրսիայի անցկացման վայրը, հարկավոր է նախապես զննել վայրը և անհրաժեշտության դեպքում, պատրաստում անհրաժեշտ նյութեր։ Օրինակ՝ զամբյուղներ այգի այցելելու համար, թուղթ, մատիտ և այլն…Լավ է երեխաներին ներգրավել անհրաժեշտ նյութերի պատրաստմանը, դա կօգնի հետաքրքրություն առաջացնել քալիք իրադարձության նկատմմբ։ Նա նաև սահմանում է էքսկուրսիայի առանձին մասերի անցկացմեն հաջորդականությունը, վայրերը և առանձին դիտարկումների և հանգստանալու համար։

- **Անվտանգության նախապատրաստում**

  Հաջորդ կարևոր քայլերից է անվտանգության նախապատրաստումը, ընտրեք տարածք ուշադրություն դարձնելով, որ տարածքը լինի անվտանգ, մեքենաների արագընթաց ճանապարհներից ապահով հեռավորության վրա։ Ինչպես նաև նախապատրաստել երեխաներին, զրուցել նրանց հետ, խոսել անվտանգության կանոնների մասին։

- **Մանկավարժի և ծնողի ներգրավում**

  Էքսուրսիաները պետք է անցկացվեն մանկավարժի և ծնողի համագործակցության արդյունքում։ Էքսկուրսիայի անցկացման ընթացքում հաճախ բաց է թողնվում ծնողի ներկայության կարևորությունը, սակայն պետք է հաշվի առնել, որ երեխաները լիակատար հանգիստ կլինեն և նյութը շատ ավելի հեշտ կընկալեն, եթե իրենց զգան լիակատար ապահով։ Իսկ այդ ապահովությունը ստեղծելու գործում կարևոր է թե ծնողի, թե դաստիարակի ներկայությունն ու աշխատանքը։

1:1 Թեմայի և տեղի ընտրությունը, անվտանգության նախապատրաստումը

Էքսկուրսիան մանկապարտեզում մի հրաշալի արկած է, որը երեխաների համար ուրախությամբ և զամանքներով լի է: Կարևոր է էքսկուրսիային պատրաստվել նախապես, որպեսզի երեխաների համար այդ օրը դառնա ավելի հետաքրքիր և ճանաչողական:

Էքսկուրսիայի կազմակերպման առաջին քայլը թեմայի ընտրությունն է: Կարելի է կազմակերպել ուղևորություն դեպի բուսաբանական կամ կենդանաբանական այգի, կամ անգամ երեխաներին ծանոթացնել բնության երևույթների հետ, այնպիսիք ինչպիսիք են ջրի գոլորշիացումը, ամպերի ձևավորումը և այլն… Շատ կարևոր է թեմաները ընտրել ըստ երեխաների տարիքային առանձնահատկությունների և հետաքրքրությունների, որպեսզի առավելագույնս հասկանալի լինի թեման և երեխաները կարողանան ազատորեն մասնակցել թեմայի քննարկմանը: Հարկավոր է երեխաներին ներառել երկխոսության մեջ, տալ հարցեր և թողնել, որ նրանք արտահայտեն իրենց կարծիքը: Դա ոչ միայն օրը դարձնում է տարաբնույթ, այլ նաև թույլ է տալիս, որ երեխաները կարողանան անկաշկանդ զրույցի բռնվել և չամաչել կիսվել իրենց մտքերով:Երկրորդ քայլով անհրաժեշտ է երեխաներին ներկայացնել թե որտեղ և ինչ պայմաններում է անցկացնելու իրենց գալիք էքսկուրսիան: Ներկայացնել անվտանգության կանոնները, առավելագույնս պատրաստել երեխաներին հնարավոր բոլոր վտանգներից հեռու պահելու համար: Հաջորդ քայլով հարկավոր է ընտրել էքսկուրսիայի ուղղությունը: Օրինակ դեպի մանկապարտեզին մոտ այգի կատարած զբոսանքի ժամանակ, դաստիարակը պետք է կարողանա ընտրել այգու ամենահետաքրքիր տարածքները և իհարկե բացատրել երեխաներին, թե այգու որ մասը ինչով է կարևոր կամ առանձնահատուկ: Շատ կարևոր է բացատրել երեխաներին, թե որքան կարևոր դեր ունի բնությունը մարդու կյանքում, բացատրել, թե ինչու է կարևոր բնությունը մաքուր պահելը և կենդանիներին խնամելը:Ցույց տալ սեփական օրինակով:

1:2 Մանկավարժի և ծնողի ներգրավվածությունը

Էքսկուրսիայի ընթացքում ծնողների և ուսուցիչների ներկայությունը առանցքային դեր է խաղում երեխայի հոգեբանության վրա դրական ազդեցության ձևավորման գործում: Ահա այս ազդեցության մի քանի ասպեկտներ:

1. Ծնողներն ու ուսուցիչները երեխաների համար անվտանգության և աջակցության աղբյուր են: Նրանց ներկայությունը երեխաների մոտ ստեղծում է անսովոր միջավայրում վստահության զգացում, ինչը հատկապես կարևոր է էքսկուրսիաների ժամանակ:
2. Համատեղ ուսումնասիրություն և քննարկում. ծնողներն ու ուսուցիչները կարող են ակտիվորեն մասնակցել երեխաների հետ նոր վայրերի ուսումնասիրությանը: Տեղի ունեցածի քննարկումը, հարցեր տալը և տեսածի մասին խոսելը նպաստում են տեղեկատվության ավելի խորը ընկալմանը և մտածողության զարգացմանը:
3. Սոցիալական Փոխազդեցություն: մեծահասակների ներկայությունը բարենպաստ մթնոլորտ է ստեղծում երեխաների և մեծահասակների միջև սոցիալական փոխազդեցության համար: Այն նպաստում է երեխաների դրական սոցիալական հմտությունների ձևավորմանը:
4. Երեխաները կարող են ոգեշնչվել այնպիսի գործողությունների մասնակցությունից, որոնք մեծահասակները նույնպես հետաքրքիր են համարում: Ծնողների և ուսուցիչների օրինակը կարող է հզոր խթան հանդիսանալ երեխաների համար:
5. Էքսկուրսիայի ընթացքում ծնողների և ուսուցիչների հետ փոխգործակցությունը օգնում է ձեռք բերված փորձը ինտեգրել ուսումնական գործընթացին: Էքսկուրսիայի ընթացքում ծնողների և ուսուցիչների հետ շփվելը օգնում է նրանց ավելի լավ հասկանալ, թե ինչ է տեղի ունենում ուսումնական գործընթացում: Սա կարող է ոգեշնչել լրացուցիչ դասեր և քննարկումներ դասարանում:

Այսպիսով, ծնողների և ուսուցիչների համատեղ մասնակցությունը էքսկուրսիաներին ամրապնդում է երեխաների և մեծահասակների միջև կապը, ապահովում է աջակցություն և խթանում երեխաների կրթական և սոցիալական զարգացումը:

Էքսկուրսիաների ընթացքում ծնողների և ուսուցիչների ներկայությունը հիմնարար դեր է խաղում երեխաների հոգեբանության վրա դրական ազդեցության ձևավորման գործում: Այս փորձը ուսուցման և զարգացման կարևոր բաղադրիչ է՝ կարևոր ասպեկտներ ներմուծելով նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական բարեկեցության մեջ:

Նախ, ծնողների և ուսուցիչների ներկայությունը երեխաների մոտ ստեղծում է անվտանգության և վստահության զգացում: Նոր և անհայտ միջավայրում երեխան կարող է անհանգստություն զգալ, և հոգատար մեծահասակներ ունենալը նրանց աջակցություն և պաշտպանություն է ապահովում: Այն թույլ է տալիս երեխաներին ավելի ազատ ուսումնասիրել շրջակա տարածքը, իրենց հարմարավետ զգալ և վայելել ուսումնական գործընթացը:

Երկրորդ, մեծահասակների և երեխաների համատեղ հետազոտությունն ու քննարկումը հարստացնում են կրթական փորձը: Մեծահասակների կողմից տրվող հարցերի քննարկումն ու դրանց պատասխանները խթանում են մտածողությունը և նպաստում տեսածի խորը ըմբռնմանը: Նման խոսակցությունները հարստացնում են լեզվի

զարգացումը և նպաստում տեղեկատվության վերլուծության և ընդհանրացման ունակության ձևավորմանը:
Երրորդ, ծնողների և ուսուցիչների հետ սոցիալական փոխազդեցությունը երեխաների սոցիալական հմտությունների ձևավորման հիմնական տարրն է: Խմբի մյուս մասնակիցների հետ փոխգործակցությունը, հաղորդակցությունը և համատեղ գործունեությունը նպաստում են թիմում համագործակցության և փոխգործակցության հմտությունների զարգացմանը:
Բացի այդ, ծնողներն ու ուսուցիչները կարող են օրինակ ծառայել երեխաների համար. Նրանց ոգևորությունն ու հետաքրքրությունը շրջապատող աշխարհի նկատմամբ կարող են ոգեշնչել երեխաներին ակտիվորեն մասնակցել և ինքնուրույն ուսումնասիրել: Մոտիվացիայի այս օրինակը խրախուսում է երեխաներին գիտելիքներ փնտրել և ընդլայնել իրենց հորիզոնները:
Այսպիսով, էքսկուրսիաների ընթացքում ծնողների և ուսուցիչների ներկայությունը հարստացնում է երեխաների կրթական փորձը, նպաստում նրանց սոցիալական զարգացմանը, ինչպես նաև ստեղծում է բարենպաստ հուզական միջավայր, որում ձևավորվում են դրական հիշողություններ և խթանում հետաքրքրասիրությունը:

ԳԼՈՒԽ 2: ԷՔՍԿՈՒՐՍԻԱՅԻ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Էքսկուրսիաների և մշակութային այցերի դերը սաների զարգացման գործում չափազանց կարևոր է, քանի որ դրանք կրթադաստիարակչական գործընթացում ապահովում են ուսուցման, զարգացման և դաստիարակման փոխադարձ կապը: Էքսկուրսիաները ընդլայնում են երեխաների մտահորիզոնը և նրանց միտքը հարստացնում են նոր տպավորություններով: Նաև երեխաներին թույլ են տալիս մոտիկից ծանոթանալ այնպիսի առարկաների և երևույթների հետ, որոնք մանկապարտեզում տեսնել հնարավոր չէ: Բացի աշխարհընկալման զարգացումից, էքսկուրսիաները բացառիկ նշանակություն ունեն նաև երեխաների խոսքի զարգացման գործում, քանի որ դրանք խթանում են հաղորդակցվելու ցանկությունը, հարստացնում բառապաշարը, կապակցված խոսքը, երկխոսելու ունակությունները:

2.1 Էքսկուրսիայի նշանակությունը ճանաչողական զարգացման հարցում

Բոլոր տեսակի էքսկուրսիաները նպաստում են սաների մածողության զարգացմանը, վերլուծելու, ընդհանրացնելու, դասակարգելու, պաճառահեևանքային կապեր հաստատելու կարողությանը: Ինչպես նաև ակտիվացնում են սանի ուշադրությունը, դիտողաքկանությունը, հիշողությունը, զգայական ունակությունները: Արդեն թագարանների, թատրոնների, ճարտարապետական հուշարձանների այցելությունները զարգացնում են գեղեցիկը տեսնելու և գնահատելու ունակությունը: Զարգանում է նաև երեխաների էսթետիկ ճաշակը, նրանք կարողանում են տեսնել գեղեցկը ամենուր՝ բնության մեջ, կյանքում, առօրյայում: Էքսկուրսիաները նաև զարգացնում են ճանաչողական ակտիվությունը: Դաստիարակության գործունեության այս ձևը նպաստում է երեխաներ բարոյական, հայրենասիրական դաստիարակությանը: Ձևավորում գեղագիտական զգացմունքները և հուզական արձագանքը շրջապատի և դրանում տեղ ունեցող իրադարձություններ հանդեպ: Էքսկուրսիաները ձևավորում են նաև գիտակցական կարգապահություն և կազմակերպվածություն, վարքի ճիշտ դրսևորումներ բակում, հասարակական վայրերում, դաստիարակի կարգադրություններն հետևելու և կատարելու ունակությունները:

2.2 Ազդեցությունը երեխաների հոգեբանության և էմոցիաների վրա

Իհարկե, էքսկուրսիաները կարևոր դեր են խաղում նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման գործում՝ դրական ազդեցություն ունենալով նրանց հոգեբանության և ընդհանուր զարգացման վրա:

Նախադպրոցական տարիքի սանի զարգացման հմար շատ կարևոր է էքսկուրսիների բոլոր տեսակների կիրառումը, քանի որ դրանց համադրումը բերում է համակողմանի զարգացման:

Ահա մի քանի ասպեկտներ որոնք հարկավոր է հաշվի առնել.

- Էքսկուրսիաների ընթացքում երեխաներն ավելիուշադիր են ընկալում իրենց շրջապատող աշխարհը: Նրանք ուշադրություն են դարձնում մանրամասներին, գույներին, ձևերին, ինչը նպաստում է դիտարկում և տեսողական ընկալման զարգացմանը:
- **Խթանում է հետաքրքրասիրությունը:** Նոր վայրեր այցելելը և շրջապատող աշխաչհի տարբեր ասպեկտների հետ ծանոթանալը երեխաների մոտհետաքրքրություն է առաջացնում: Էքսկուրսիաները հնարավորություն են տալիս հարցեր տալ, պատասխաններ փնտրել և ընդլայնել գիլտելիքները:
- **Սոցիալական փոխազդեցությունը:** Խմբային էքսկուրսիները նպաստում են սոցիալական հմտությունների զարգացմանը: Երեխաները սովորում են շփվել միմյանց հետ, կիսվել տպավորություններով և համագործակցել խնդիրների լուծման հարցում:
- **Դրական և վառ հիշողությունները,** որոնք կապված են թանգարաններ, կենդանաբանական այգիներ կամ այլ հետաքրքիր վայրեր այցելելու հետ, կարող են երեխաների մոտ դրական վերաբերմուն ստեղծել ուսամա և հետազոտության նկատմամբ:
- **Էքսկուսիայի փորձը հարստացնում է երեխայի հիշողությունը:** Տեսողական և հուզական տպավորությունները օգնում են ամրապնդել տեղեկատվությունը և հիմք ստեղծել հետագա ուսուցման համար:
- Էքսկուրսիաների միջոցով բնության, արվեստի, պատմության և մշակույթի հետ ծանոթությունը, նպաստում է երեխաների մոտ **հարգանքի ձևավորմանը:** Իրենց շրջապատող աշխարհի և դրա բազմազանության նկատմամբ:

Այսպիսով, էքսկուրսիաները ոչ միայն զվարճալի ժամանց են, այլև արդյունավետ գործիք նախադպրոցական տարիքի երեխաների կրթության և դրական հոգեբանության ձևավորման գործում:

2.3 Ծանոթացում շրջակա աշխարհին և մշակույթին

Շրջակա աշխարհին ծանոթանալը երեխայի հոգեկան զարգացման և բնավորության գծերի ձևավորման անհրաժեշտ պայման է:

Դաստիարակը պետք է երեխաների մտահորիզոնը հարստացնի առարկաների, մարդկանց և նրարնց աշխատանքի, կենդանի և անկենդան բնության վերաբերյալ գիտելիքներով: Այդ խնդրի լուծումը կնպաստի երեխաների մտավոր ընդունակությունների և խոսքի զարգանալուն:

Շրջակա միջաայրը ճանաչելը լիարժեք է այն ժամանակի, երբ այն սերտ կապված է երեխաների զգացմունքները դաստիարակելու հետ, այսինքն մարդկանց նկատմամբ սիրո և բարիացակամության, ամեն տեսակ աշխատանք կատարող մարդկանց նկաւտմամբ հարգանքի, հայրենիքի, հայրենի բնության, մեր ավանդույթների նկատմամբ: Էքսկուրսիաները առաջին հերթին նպաստում են երեխաների խոսքի զարգացմանը, նրանք ճանաչում են իրենց շրջապատը, առարկաները, դրանց անունները, էական հատկանիշները: Սովորում են հարցնել, պատասխաններ տալ, պատմել տեսածի մասին: Էքսկուրսիայի կազմակերպման համար խիստ կարևոր պայման չէ մանկապարտեզից շատ հեռվանալ, այն կարելի կազմակերպել նաև մանկապարտեզի շենքում կամ տարածքում: Էքսկուրսիան մանկապարտեզի շենքում կատարելիս կարելի է այցելել օրինակ խոհանոց, տեսնել խոհարարի աշխատանքը, ինչպես է պատրաստվում, և հնարավորության դեպքում մասնակցել ճաշատեսակի պարաստմանը: Դաստիարակը պետք է պատմի մանկապարտեզի բոլոր աշխատակիցների աշխատանքի մասին, երեխան պետք է հստակ պատկերացում ունենա թե օրինակ ինչ աշխատանք է կատարում դաստիարակի օգնականը: Կարելի է հետևել այգեպանի

աշխատանքին, ինչպես է աշխատում, օգնել նրան փոքրիկ գործերում։ Անչափ կարևոր է խոսել երեխաների հետ տարբեր աշխատանքների կարևորության մասին։ Սերմանել նրանց մեջ սեր դեպի աշխատանքը, հարգանք ամն տեսակ աշխատանի և դրանք կատարող մարդկանց հանդեպ։ Կրելի է նաև զննական խաղեր կազմակերպել տնային գործունեության առարկաների ու նրանց հատկությունների վերաբերյալ գիտելիքներն ամրապնդելու, ինչպես նար առարկաների գույները, չափերը, ձևերը, ճիշտ անունները յուրացնելու համար։

Դեպի մշակութային վայրեր ուղղված այցերը, նպաստում են նախադպրոցական երեխաների գեղագիտական հայացքների, ինչպես նաև ճաշակի ձևավորմանը, դարձնում ունակ իրերն ու երևույթները գնահատել էմոցիոնալ կերպով։ Այսօր հայաստանի թանգարանների մեծ մասը ներկայանում է բազմապիսի կրթական ծրագրերով։ Որոնք նախատեսված են նև դպրոցական տարիքի երեխաների համար։ Հետաքրքիր ինտերակտիվ էքսկուրսիաների, տարբեր թեմաներով կրթական ծրագրերի միջոցով թանգարանները այս հասակի երեխաներին մոտեցնում են արվեստին։ Դեպի մշակութային վայրեր այցելությունների շրջանակում կարելի է ներառել այցը ցուցահանդեսներ (օր.՝ Հ. Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոն), որտեղ երեխաները կտեսնեն իրենց հասակակիցների վրձնած նկարները ձեռքի աշխատանքները, քանդակները, պատկերացում կկազմեն կերպարվեստի ճյուղերի մասին։ Մի շարք թանգարաններում ու գրադարաններում (Խնկո ապոր գրադարան) ամռան ամիսներին գործում են ամառային դպրոցներ, փոքրիկ այցելուներին առաջարկելով հետաքրքիր նախագծեր։ Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում, տիկնիկային և խամաճիկների թատրոններում ևս նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեված հետաքրքիր ծրագրեր, ներկայացումներ կան։

Արվեստը խորը ազդեցություն է թողնում նախադպրոցական տարիքի երեխաների մտավոր զարգացման վրա՝ ընդգրկելով նրանց անհատականության տարբեր կողմերը: Նախ, ստեղծագործական գործունեությունը նպաստում է երեխաների ստեղծագործական մտածողության խթանմանը: Նկարչությունը, քանդակագործությունը, երաժշտությունը և պարը երեխաներին հնարավորություն են տալիս արտահայտել իրենց գաղափարներն ու զգացմունքները, ինչը օգնում է զարգացնել յուրահատուկ մտածելակերպ: Արվեստը նաև զարգացնում է երևակայությունը: Սա կարևոր է նրանց մտավոր զարգացման և խնդիրների լուծման, ստեղծագործական մոտեցման ձևավորման համար: Բացի այդ արվեստի գործունեությունը, օրինակ՝ կավճանկարչությունը,կավով քանդակագործությունը և այլ ստեղծագործական ախշխատանքները պահանջում են ճշտգրտություն և ձեռքի հսկողություն, որն օգնում է զարգացնել մանր մոտորիկան, ինչն անհրաժեշտ է գրավոր հմտություններին վարժ տիրապետելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով այս բոլոր նյութերը, հանգում ենք այն եզրակացության, որ նախադպրոցական տարիքի երեխաների հոգեբանական զարգացման մեջ էքսկուրսիաների դերի ուսումնասիրության հարցում կան մի քանի հիմնական ասպեկտներ.

- Էքսկուրսիաները երեխաներին հնարավորություն են տալիս զգալու իրենց շրջապատող աշխարհի տարբեր ոլորտները ավելի լայն համատեքստում:
- Էքսկուրսիաների ընթացքում ստացված տեսողական, ձայնային և շոշափելի տպավորությունները, հարուստ աղբյուր են երեխաների զգայական ոլորտի զարգացման համար: Բացի այդ էքսկուրսիաները նպաստում են երեխաների սոցիալական հմտությունների զարգացմանը: Նոր մարդկանց այդ թվում մեծահասակների և հասակակիցների հետ ծանոթությունը հնարավորություն է տալիս հաղորդակցման և համատեղ գործունեության հմտությունների զարգացմանը:Այսպիսով երեխաները զարգացնում են իրենց ինքնուրույնությունը:
- Էքսկուրսիաները խթանում են ճանաչողական հետաքրքրությունը և ատիվացնում ճանաչողական գործընթացները: Նոր առարկաների ուսումնասիրությունը և ուսուցիչների ու հասակակիցների հետ տարբեր հարցերի քննարկումները նպաստավոր միջավայր են ստեղծում գիտելիքների ձեռքբերման, մտածողության ու խոսքի զարգացման համար: Այս փորձառությունները դրականորեն են ազդում երեխաների կրթական ձեռքբերումների վրա:

Այսպիսով էքսկուրսիաները նախադպրոցական տարիքի երեխաների ուսումնական գործընթացի կարևոր բաղադրիչն են: նման գործողությունների իրականացումը մանկական հաստատությունների կրթական պրակտիկայում կարող է օգնել երեխաների համար ստեղծել ավելի արդյունավետ և հետաքրքիր կրթական միջավայր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- «ՄԱՆԿԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ»
- «ՄԱՆԿԱԿԱՆ ԱՎԱԳ ԽՄԲԻ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳԻՐ»
- ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ «ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
- «ՆԱԽԱՇԱՎԻՂ ԳԻՏԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ»
- «ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ» ՈՒՍՈՒՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ» ԱԼ. ԳՐԻԳՈՐՅԱՆ Ա. ՄԱՐԱԲՅԱՆ
- «ԴԱՍՏԻԱՐԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՄԹՈԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԵՐՊՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ»